# *ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԹԵԶԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ*

Ավարտական աշխատանքները և մագիստրոսի թեզերը պետք է ունենան հետևյալ բաժինները՝

- **Տիտղոսաթերթ** (տե՛ս Հավելված 1)
- **Բովանդակություն** (կազմելու պայմանները տե՛ս տեխնիկական պահանջներում)
- **Ներածություն** (պետք է ներկայացնել թեմայի արդիականությունը, նպատակը, կառուցվածքը)
- **Հիմնական բաժինները,** ենթաբաժինները (թեմայի վերաբերյալ կատարած ուսումնասիրությունները, աշխատանքի կատարման ընթացքը)
- **Եզրակացություն** (ամփոփում է կատարված աշխատանքի հիմնական դրույթները)
- **Գրականության ցանկ** (կազմելու պայմանները տե՛ս տեխնիկական պահանջներում)
- **Հավելվածներ** (ըստ անհրաժեշտության)

**Ավարտական աշխատանքին/մագիստրոսական թեզին ներկայացվող տեխնիկական պահանջներն են.**

- Թղթի չափը՝ A4
- Ուղղվածությունը՝ Portrait
- Լուսանցքները՝ վերևից – 2 սմ, ներքևից – 2 սմ, աջից – 1 սմ, ձախից – 2 սմ
- Տառատեսակը՝ GRAPALAT / Sylfaen
- Տեքստի տառաչափը՝ 12 pt
- Տողամիջյան հեռավորությունը՝ 1.5
- Գլուխների/բաժինների վերնագրեր/ենթավերնագրերը՝ ոճավորել Heading 1-ով (GRAPALAT / Sylfaen, 14 pt, թավ/Bold)
- Էջակալումը՝ աջ, ներքևի անկյունում
- Տիտղոսաթերթն (տե՛ս՝ հավելված 1) էջակալման ենթակա չէ

Տիտղոսաթերթի հաջորդ էջում **Բովանդակությունը** ավտոմատ տեղադրելու համար կիրառել՝
References

Table of contents հրամանը:

Գլուխների/բաժինների վերնագրերի/ենթավերնագրերի բովանդակային կամ էջակալման փոփոխություններից հետո կատարել **Բովանդակության** թարմացում՝
Update table հրամանի միջոցով:

Փաստաթղթում տեղադրված աղյուսակները, նկարները և այլ գրաֆիկական պատկերները պետք է լինեն համարակալված և ունենան ստորև տեղադրված նկարագրեր: Նկարը տեղադրելուց հետո աջ click-ով հայտնված մենյուում ընտրել Insert caption հրամանը և մուտքագրել նկարագրությունը:

## Օգտագործված գրականության վերաբերյալ.

Գրականության ցանկը պետք է լինի համարակալված, տեղադրված լինի աշխատանքի վերջում, հավելվածներից առաջ, սկզբում հայալեզու գրականության այբբենական ցանկը, այնուհետև օտարալեզուները հետևյալ ձևերով՝
Հայերեն և ռուսերեն գրականության դեպքում՝

Հեղինակի ազգանուն, անվան առաջին տառ., աշխատության անվանում, հրատարակչության անվանում, քաղաքի անվանում, հրատարակման թիվ, էջերի քանակ:
Օրինակ՝

1. Սարգսյան Մ., Սովետական Հայաստանի գրաֆիկան, Հայպետհրատ, Երևան, 1961, 184 էջ

Այլ լեզուներով գրականության ցանկը ձևավորվում է հետևյալ ձևաչափով.

Օրինակ՝

1. Armstrong, M. (2014). Armstrong's Handbook of Human Resource Management Practice, 13th edition, UK, Ashford Colour Press.

Համացանցային աղբյուրները ներկայացնելիս նշել նյութի անվանումը, համացանցային հասցեն և վերջին դիտման ամսաթիվը:

Օրինակ՝

Հայ ծաղրանկարիչ. Ծիծաղել ապրելու համար, https://armeniasputnik.am/armenia/20160107/1580984.html, 2016, 3 փետրվարի

Տեքստում գրականության վրա հղում կատարելիս տողատակում՝

Հեղինակի ազգանուն, անվան առաջին տառ., աշխատության անվանում, հրատարակչության անվանում, քաղաքի անվանում, հրատարակման թիվ, կոնկրետ էջը կամ էջերը, որտեղից մեջբերում է կատարվել:

Տողատակում հղումներ կամ բացատրություններ ունենալու համար բառի կամ մտքի վերջում օգտագործել.

References

Insert footnote

հրամանը, որը հերթական համարը կտեղադրի բառի կամ մտքի վրա և տողատակում կբացի դաշտ՝ բացատրությունը կամ հղումը լրացնելու համար:

*ՀԱՎԵԼՎԱԾ 1*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

------------------------------------------------------------------------ ՖԱԿՈՒԼՏԵՏ /անվանումը/

---------------------------------------------------------------------- ԱՄԲԻՈՆ /անվանումը/

---------------------------------------------------------------------------------------------------------- թեմայով
թեմայի վերնագիր

## Մագիստրոսական թեզ

«-----------------------------------------------------------» մասնագիտության
անվանումը

« ----------------------------------------------------------» կրթական ծրագիր
անվանումը

Մագիստրոսական թեզը երաշխավորվում է հրապարակային պաշտպանության՝

Ամբիոնի վարիչ՝ ----------------------------------------------------------------
անուն, ազգանուն, հայրանուն, ստորագրություն

Մագիստրոսական թեզը պատրաստ է հրապարակային պաշտպանության՝

Ղեկավար՝ -----------------------------------------------------------------
անուն, ազգանուն, հայրանուն, ստորագրություն

Ուսանող՝ --------------------------------------------------------------------
անուն, ազգանուն, հայրանու, ստորագրություն

Երևան 20…թ.

*ՀԱՎԵԼՎԱԾ 1*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

------------------------------------------------------------------- ՖԱԿՈՒԼՏԵՏ /անվանումը/

---------------------------------------------------------------- ԱՄԲԻՈՆ /անվանումը/

--------------------------------------------------------------------------------------------------- թեմայով
թեմայի վերնագիր

## Բավակալավրի ավարտական աշխատանք

«------------------------------------------------------» մասնագիտության
անվանումը

« -----------------------------------------------------» կրթական ծրագիր
անվանումը

Ավարտական աշխատանքը երաշխավորվում է հրապարակային պաշտպանության՝

Ամբիոնի վարիչ՝ -----------------------------------------------------------
անուն, ազգանուն, հայրանուն, ստորագրություն

Ավարտական աշխատանքը պատրաստ է հրապարակային պաշտպանության՝

Ղեկավար՝ ------------------------------------------------------------
անուն, ազգանուն, հայրանուն, ստորագրություն

Ուսանող՝ ----------------------------------------------------------------
անուն, ազգանուն, հայրանուն, ստորագրություն

Երևան 20…թ.